



Արմենիա  
Ինչորանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»  
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի  
«31» հունվարի 2025 թ. թիվ 03 որոշմամբ

# «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

| Նախագիծը՝                  | Անուն / Ազգանուն | Պաշտոն                               | Ամսաթիվ    | Ստորագրություն |
|----------------------------|------------------|--------------------------------------|------------|----------------|
| ԿԱԶՄԵՑ                     | Գ. Դավթյան       | Մեթոդաբանության<br>վարչության ա.կ.մ. | 20"01"2025 |                |
| ՍՏՈՒԳԵՑ                    | Վ. Պետրոսյան     | Գործառնական<br>գծով տնօրեն           | 21.01.2025 |                |
| ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ<br>Է ԱՐԺԱՆԱՑԵԼ | Ա. Դադունց       | Գլխավոր տնօրեն                       | 30"01"2025 |                |

|                                                                                                              |                                                            |              |            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------|--------------|------------|
|  <b>ԱՐՄԵՆԻԱ</b><br>ԻՆՇՈՒՐԱՆՍ | <b>Անձնական տվյալների մշակման և<br/>պաշտպանության կարգ</b> | Կող SU/Կ-13/ |            |
|                                                                                                              |                                                            | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                              |                                                            | Էջ 2/21      |            |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                            |    |
|--------------------------------------------------------------------------------------------|----|
| ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....                                                         | 3  |
| ԳԼՈՒԽ 2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....                                                           | 4  |
| ԳԼՈՒԽ 3. ԿԱՐԳԻ ՈԼՈՐՏՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....                                       | 5  |
| ԳԼՈՒԽ 4. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ .....        | 5  |
| ԳԼՈՒԽ 5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....                          | 8  |
| ԳԼՈՒԽ 6. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....                                | 9  |
| ԳԼՈՒԽ 7. ԿԵՆՍԱԶԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....                            | 9  |
| ԳԼՈՒԽ 8. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ .....                   | 10 |
| ԳԼՈՒԽ 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱԴՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ ..... | 12 |
| ԳԼՈՒԽ 10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ .....                                | 13 |
| ԳԼՈՒԽ 11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....                                                        | 13 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1 .....                                                                           | 14 |

|                                                                                                               |                                                    |              |            |
|---------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|--------------|------------|
|  «ԱՐՄՏԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»<br>ԱՍՊԸ | Անձնական տվյալների մշակման և<br>պաշտպանության կարգ | Կոդ SU/Կ-13/ |            |
|                                                                                                               |                                                    | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                               |                                                    | Էջ 3/21      |            |

## ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԱՐՄՏԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ անձնական տվյալների մշակման և պաշտպանության կարգ»-ը կանոնակարգում է Ընկերությունում անձնական տվյալներ մշակման, օգտագործման, փոխանցման, պաշտպանության կարգը և պայմանները: Կարգը նպատակ ունի ապահովել անձնական տվյալների և Տվյալների սուբյեկտների վերաբերյալ այլ տեղեկատվության պատշաճ պաշտպանությունը չարտոնված մուտքից և հրապարակումից, ինչպես նաև միասնականացնել Ընկերությունում անձնական տվյալների մշակման գործընթացը:

1.2. Կարգը մշակվել է Օրենքի, ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերի, Ընկերության «Տեղեկատվական անվտանգության քաղաքականության» (կոդ SU) դրույթներին համապատասխան:

1.3. Կարգից բխում են հաճախորդների, ապահովագրական գործակալների և այլ երրորդ կողմերի հետ Ընկերության հարաբերություններին վերաբերող՝ կարգից ցածր իրավաբանական ուժ ունեցող ներքին իրավական ակտեր:

1.4. Կարգը տարածվում է Ընկերությունում անձնական տվյալների հետ կատարվող բոլոր գործողությունների վրա՝ ավտոմատացման միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց:

1.5. Կարգում ամրագրված դրույթները պարտադիր են Ընկերությունում անձնական տվյալների մշակման իրավասություն ունեցող բոլոր անձանց, անձնական տվյալների մշակման և պաշտպանության ապահովման գործընթացների կազմակերպմանը մասնակցող անձանց համար: Ընկերությունում ընդունվող՝ տեղեկատվության անվտանգությանն առնչվող բոլոր որոշումները պետք է հաշվի առնեն Կարգի պահանջները:

1.6. Կարգի կիրառման նկատմամբ ընթացիկ վերահսկողությունն իրականացնում է Որակի պատասխանատուն, իսկ ընդհանուր վերահսկողությունը՝ Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը:

1.7. Կարգը համապատասխանում է ISO 9001:2015 և 27001:2013 ՈԿՀ և ՏԱԿՀ ստանդարտներին:

1.8. Կարգում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն Ընկերության խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների, Գլխավոր տնօրենի, Որակի պատասխանատուի, Մեթոդաբանության վարչության առաջարկով կամ ՀՀ օրենսդրության պահանջով: Կարգը պետք է վերանայվի Ընկերության գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս քան տարին մեկ անգամ:

1.9. Կարգն ուժի մեջ է մտնում հաստատումից տասը օր հետո: Կարգը չունի նախորդ տարբերակներ: Կարգն ուժի մեջ մտնելու պահից դրանից բխող և գործող ներքին իրավական ակտերի համապատասխանեցումը Կարգի պահանջներին իրականացվում է դրանց հերթական վերանայման ընթացքում:

|                                                                                                                |                                                    |              |            |
|----------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|--------------|------------|
|  «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՏԻՏՈՒՏԱՆ»<br>ԱՍՊԸ | Անձնական տվյալների մշակման և<br>պաշտպանության կարգ | Կոդ SU/Կ-13/ |            |
|                                                                                                                |                                                    | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                                |                                                    | Էջ 4/21      |            |

1.10. Կարգը հրապարակային փաստաթուղթ է և դրա հրապարակային հասանելիությունն ապահովվում է Ընկերության կայքում հրապարակման միջոցով: Ընկերության աշխատողներին Կարգի հասանելիությունն ապահովում է Մեթոդաբանության վարչությունը՝ Ընկերությունում գործող ներքին իրավական ակտերի տեղեկատվական համակարգում այն տեղադրելու միջոցով:

## ԳԼՈՒԽ 2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Եզրույթներ և հասկացություններ .

2.1.1. *Անձնական կյանքի տվյալներ*՝ անձի անձնական կյանքի, ընտանեկան դրության, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակի վերաբերյալ կամ նման այլ տեղեկություններ .

2.1.2. *Անձնական տվյալներ*՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություններ, որոնք թույլ են տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնել նրա ինքնությունը .

2.1.3. *Ընկերություն*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՏԻՏՈՒՏԱՆ» ԱՍՊԸ .

2.1.4. *Ծառայություններ*՝ Ընկերության գործունեության տեսակներին վերաբերող ծառայությունների ամբողջություն, որոնք ուղղված են Տվյալների սուբյեկտի պահանջմունքների բավարարմանը .

2.1.5. *Կայք*՝ Ընկերության տեղեկատվական ռեսուրսը համացանցում .

2.1.6. *Կարգ*՝ ««ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՏԻՏՈՒՏԱՆ» ԱՍՊԸ անձնական տվյալների մշակման և պաշտպանության կարգ» .

2.1.7. *Կենսաչափական անձնական տվյալներ*՝ անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններ .

2.1.8. *Հանրամատչելի անձնական տվյալներ*՝ տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ .

2.1.9. *Հատուկ կարեգործիայի անձնական տվյալներ*՝ ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, անձի առողջական վիճակին և ինտիմ կյանքին վերաբերող տեղեկություններ .

2.1.10. *Տվյալների սուբյեկտ*՝ ֆիզիկական անձ, որին վերաբերում են անձնական տվյալները .

2.1.11. *Տվյալների օպերատոր*՝ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային հիմնարկ կամ

|                                                                                                                      |                                                            |              |            |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------|--------------|------------|
|  <p>«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»<br/>ԱՍԴԸ</p> | <p>Անձնական տվյալների մշակման և<br/>պաշտպանության կարգ</p> | Կող SU/Կ-13/ |            |
|                                                                                                                      |                                                            | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                                      |                                                            | Էջ 5/21      |            |

կազմակերպություն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը կազմակերպում և/կամ իրականացնում է անձնական տվյալների մշակումը, ներառյալ՝ Ընկերությունը.

2.1.12. *Օրենք*՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք:

Կարգում օգտագործվող այլ տերմիններ կիրառվում են Օրենքով սահմանված իմաստով:

2.2. **Հապավումներ.**

2.2.1. ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն,

2.2.2. ՈԿ՝ Որակի կառավարման համակարգ,

2.2.3. ՏՄԿ՝ Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ,

2.2.4. ՏՄ՝ Տեղեկատվական անվտանգություն:

2.3. **Օգտագործվող նշաններ**

Գործընթացների սխեմատիկ պատկերներ չեն կիրառվում սույն փաստաթղթում:

### ԳԼՈՒԽ 3. ԿԱՐԳԻ ՈԼՈՐՏՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

3.1. **Կարգի ոլորտներ**

Կարգը սահմանում և մանրամասնում է՝ Ընկերության կողմից մշակվող և պաշտպանվող անձնական տվյալների շրջանակը. դրանց մշակման սկզբունքները, նպատակները, հիմքերը, եղանակները, ժամկետները և պայմանները. անձնական կենսաչափական տվյալների, հատուկ կատեգորիայի անձնական տվյալների և անձնական հանրամատչելի տեղեկատվության մշակման և պաշտպանության առանձնահատկությունները. Տվյալների սուբյեկտի իրավունքները և դրանց իրացման մեխանիզմները, Ընկերության կողմից կիրառվող անձնական տվյալների պաշտպանության միջոցները:

3.2. **Հաշվետվական համակարգ**

Կարգի ոլորտներին վերաբերող միասնական ամփոփ հաշվետվական համակարգ չի կիրառվում:

### ԳԼՈՒԽ 4. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

4.1. Անկախ անձնական տվյալների հավաքագրման եղանակներից Ընկերությունը ձեռնարկում է Տվյալների սուբյեկտների անձնական կյանքի գաղտնիության իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողություններ, հաշվի առնելով տվյալների մշակման հետևյալ սկզբունքները.

4.1.1. *Օրինականություն.* Ընկերությունը մշակում է անձնական տվյալները բացառապես օրինական և որոշակի նպատակներով և չի օգտագործում անձնական

|                                                                                                              |                                                    |              |            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|--------------|------------|
|  «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»<br>ԱՍԴԸ | Անձնական տվյալների մշակման և<br>պաշտպանության կարգ | Կող SU/Կ-13/ |            |
|                                                                                                              |                                                    | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                              |                                                    | Էջ 6/21      |            |

տվյալները այլ նպատակներով՝ առանց Տվյալների սուբյեկտի համաձայնության: Եթե Տվյալների սուբյեկտը համաձայն չէ իր անձնական տվյալների մշակմանը, Ընկերությունը զգուշացնում է, որ անձնական տվյալների մշակման հետ կապված ծառայությունները հասանելի չեն լինի այդ Տվյալների սուբյեկտին:

4.1.2. *Նպատակայնություն.* Ընկերությունը մշակում է անձնական տվյալները միայն հստակ սահմանված օրինական նպատակներով և չի մշակում անձնական տվյալները այդ նպատակների հետ անհամատեղելի եղանակներով:

4.1.3. *Համաչափություն.* Ընկերությունը մշակում է՝ սահմանված նպատակներին հասնելու համար նվազագույն անհրաժեշտ անձնական տվյալներ: Եթե սահմանված նպատակին կարելի է հասնել ապանձնավորված միջոցներով, ապա Ընկերությունը չի մշակում անձնական տվյալներ:

4.1.4. *Արժանահավաստություն.* Ընկերության կողմից մշակվող անձնական տվյալները պետք է լինեն ամբողջական, ճշգրիտ, պարզ և հնարավորինս թարմ: Տվյալների սուբյեկտը ձեռնարկում է բոլոր ողջամիտ միջոցները, որ թերի, հնացած կամ ոչ ճշգրիտ անձնական տվյալները անհապաղ ջնջվեն կամ ճշգրտվեն:

4.1.5. *Նվազագույն ներգրավում.* Եթե Ընկերությանն անհրաժեշտ անձնական տվյալները հասանելի են որևէ միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգում կամ կարող են ստացվել մեկ այլ մարմնից, ապա այդ անձնական տվյալները չի պահանջվում Տվյալների սուբյեկտից:

4.1.6. *Պահպանման ժամկետայնություն.* Ընկերությունը պահպանում է անձնական տվյալներն այնքան ժամանակ, որքան դրանք կիրառելի են Տվյալների սուբյեկտին նույնականացնելու համար, բայց ոչ ավել, քան պահանջում է տվյալների մշակման նպատակը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական տվյալների պահպանման ժամկետը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:

4.1.7. *Գաղտնիություն և անվտանգություն.* Ընկերությունը մշակում է անձնական տվյալները՝ ապահովվելով դրանց պատշաճ անվտանգությունը, այդ թվում՝ պաշտպանելով դրանք չարտոնված կամ ապօրինի մշակումից, պատահական կորստից, ոչնչացումից կամ վնասումից, և օգտագործելով համապատասխան իրավական, կազմակերպչական և տեխնիկական միջոցներ:

4.2. Ընկերությունը, հանդես գալով որպես Տվյալների օպերատոր, սուբյեկտների անձնական տվյալները մշակում է Կարգի Հավելվածում նշված նպատակներով և հիմքերով:

4.3. Ընկերությունն ապահովում է մշակվող անձնական տվյալների բովանդակության և ծավալի համապատասխանությունը տվյալների մշակման նպատակներին և, անհրաժեշտության դեպքում, միջոցներ է ձեռնարկում անհամապատասխանությունները վերացնելու համար:

4.4. Տվյալների սուբյեկտի հետ համաձայնեցրած նպատակով ստացած անձնական տվյալները որևէ այլ (փոփոխված) նպատակով մշակելու համար, Ընկերությունը Տվյալների սուբյեկտից խնդրում է նոր համաձայնություն՝ անձնական տվյալների մշակման փոփոխված

|                                                                                                              |                                                    |              |            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|--------------|------------|
|  «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»<br>ԱՍԴԸ | Անձնական տվյալների մշակման և<br>պաշտպանության կարգ | Կոդ SU/Կ-13/ |            |
|                                                                                                              |                                                    | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                              |                                                    | Էջ 7/21      |            |

նպատակի համար, եթե չկան փոփոխված նպատակով այդ տվյալները մշակելու համար այլ հիմքեր:

4.5. Ընկերությունը կարող է մշակել սուբյեկտների անձնական տվյալները հետևյալ գործողությունների (կամ գործողությունների ամբողջության, ներառյալ ավտոմատացման ցանկացած միջոցների, տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց) շրջանակներում՝

- 4.5.1. հավաքագրում,
- 4.5.2. մուտքագրում,
- 4.5.3. համակարգում,
- 4.5.4. ձևավորում,
- 4.5.5. պահպանում,
- 4.5.6. օգտագործում,
- 4.5.7. վերափոխում,
- 4.5.8. վերականգնում,
- 4.5.9. փոխանցում,
- 4.5.10. ճշգրտում,
- 4.5.11. արգելափակում,
- 4.5.12. ապանձնավորում,
- 4.5.13. ոչնչացում:

4.6. Անձնական տվյալների մշակման համար Ընկերության կիրառվող հիմնական եղանակներ են՝

- 4.6.1. ավտոմատացված (ավտոմատ գործիքների կիրառմամբ),
- 4.6.2. ոչ ավտոմատացված,
- 4.6.3. խառը:

4.7. Ընկերությունը հատուկ անձնական տվյալները մշակում է միայն Տվյալների սուբյեկտի համաձայնության պայմանով, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ առանց նման համաձայնության: Ընդ որում, հատուկ անձնական տվյալներ մշակելիս Ընկերությունը ձեռնարկում է միջոցներ՝ կանխելու այն ռիսկերը, որոնք կարող են վնասել Տվյալների սուբյեկտի իրավունքներին:

4.8. Անձնական տվյալների մշակման նպատակներին հասնելու համար Ընկերությունը իրավունք ունի անձնական տվյալները, անհրաժեշտության դեպքում, փոխանցել երրորդ անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

4.9. Ընկերության կողմից անձնական տվյալների մշակման ժամկետները որոշվում են, ելնելով՝

- 4.9.1. անձնական տվյալների մշակման նպատակներից,

|                                                                                                                                      |                                                 |              |            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------|--------------|------------|
|  <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br/>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐԱՆ</p> | Անձնական տվյալների մշակման և պաշտպանության կարգ | Կող SU/Կ-13/ |            |
|                                                                                                                                      |                                                 | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                                                      |                                                 | Էջ 8/21      |            |

4.9.2. Տվյալների սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի պահանջներից,

4.9.3. Անձնական տվյալների մշակման համար տրված Տվյալների սուբյեկտների համաձայնության գործողության ժամկետներից,

4.9.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներից:

4.10. Ընկերությունը դադարեցնում է անձնական տվյալների մշակումը հետևյալ դեպքերում՝

4.10.1. անձնական տվյալների մշակման դադարեցման պայմանների ի հայտ գալը կամ սահմանված ժամկետները լրանալը,

4.10.2. անձնական տվյալների մշակման նպատակներին հասնելը կամ այդ նպատակներին հասնելու անհրաժեշտության վերանալը,

4.10.3. Տվյալների սուբյեկտի պահանջով՝ անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,

4.10.4. անձնական տվյալների մշակման ոչ իրավաչափ դառնալը, երբ անհնարին է ապահովել անձնական տվյալների մշակման իրավաչափությունը,

4.10.5. Ընկերության լուծարումը:

## ԳԼՈՒԽ 5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1. Ընկերությունն իրավունք ունի մշակել Տվյալների սուբյեկտի վերաբերյալ այլ տեղեկատվություն, մասնավորապես.

5.1.1. տվյալներ, որոնք ինքնաշխատ կերպով ստացվում են սերվերում՝ էջանիշների օգտագործմամբ (cookies),

5.1.2. տվյալներ, որոնք ինքնաշխատ կերպով ստացվում են սերվերում՝ կայք մուտք գործելիս և կայքում օգտատիրոջ հետագա գործողությունների ժամանակ (օրինակ՝ հոսթի IP-հասցե, օգտատիրոջ օպերացիոն համակարգի տեսակ, բրաուզերի տեսակ, այցելած կայքէջեր և այլն):

5.2. Կարգի 5.1 կետում նշված տեղեկատվությունը մշակվում է Ընկերության կողմից անանուն (ոչ անձնավորված)՝ ընդհանուր վիճակագրություն ստանալու նպատակով՝ կայքի ֆունկցիոնալությունը կատարելագործելու, աշխատանքի որակը բարձրացնելու, Ընկերության ծառայությունները բարելավելու, Տվյալների սուբյեկտի անբարեխիղճ վարքագիծը կանխելու և խափանելու, իրավախախտումները և հանցագործությունները կանխարգելելու, բացահայտելու և խափանելու գործում աջակցություն ցուցաբերելու համար:

5.3. Անհրաժեշտության դեպքում կամ Կարգի 5.2 կետում նշված նպատակներին հասնելու համար, Ընկերությունն իրավունք ունի այդ տեղեկատվությունը փոխանցել երրորդ անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

|                                                                                                                                                             |                                                    |              |            |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|--------------|------------|
|  <b>ԱՐՄԵՆԻԱ</b><br>ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»<br>ԱՍԴԸ | Անձնական տվյալների մշակման և<br>պաշտպանության կարգ | Կող SU/Կ-13/ |            |
|                                                                                                                                                             |                                                    | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                                                                             |                                                    | Էջ 9/21      |            |

5.4. Ընկերությունը կարող է մշակել Կարգի 5.1 կետում նշված տեղեկատվությունը սույն Կարգի 4.5, 4.6, 4.8, 4.9 կետերում նշված գործողությունների, պայմանների, եղանակների և ժամկետների շրջանակներում:

## ԳԼՈՒԽ 6. ԱՆԾՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Անձնական տվյալների մշակման հիմքում Տվյալների սուբյեկտի համաձայնությունն է, բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, երբ անձնական տվյալների մշակումն իրականացվում է առանց նման համաձայնության:

6.2. Տվյալների սուբյեկտի համաձայնությունը՝ նրա կամքի ազատ, միանշանակ, իրազեկված արտահայտումն է, որով նա թույլ է տալիս մշակելու իր անձնական տվյալները: Տվյալների մշակման անհամաձայնությունը կամ համաձայնություն չտալը Ընկերությանն իրավունք է տալիս մերժել Ընկերության ծառայությունների (աշխատանքների) տրամադրումը Տվյալների սուբյեկտին, եթե այդ ծառայությունների իրականացումն անմիջականորեն կապված է անձնական տվյալների մշակման հետ:

6.3. Անձնական տվյալների պահպանությունն իրականացվում է այն ձևով, որը թույլ է տալիս նույնականացնել Տվյալների սուբյեկտին այն ժամանակահատվածում, որը պահանջում են անձնական տվյալների մշակման նպատակները, բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական տվյալների պահպանման ժամկետը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ կամ Տվյալների սուբյեկտի հետ կնքված (կնքվող) պայմանագրով:

6.4. Անձնական տվյալների մշակումը դադարեցնելու պայման են հանդիսանում մշակման նպատակներին հասնելը, մշակման ժամկետի ավարտը, Տվյալների սուբյեկտի համաձայնության ետ կանչելը, անձնական տվյալների մշակումն անիրավաչափ դառնալը:

6.5. Անձնական տվյալների մշակման դադարեցումից հետո Ընկերությունը ոչնչացնում է դրանք, ինչը ենթադրում է անձնական տվյալների կրիչի ֆիզիկական ոչնչացում կամ դրանից տեղեկատվության ջնջում: Անձնական տվյալների ոչնչացման եղանակներն ու կանոնները կախված են դրանց կրիչից՝ թղթային կամ էլեկտրոնային: Ընկերությունը թղթային փաստաթղթերից ազատվում է ջերմային մշակման (այրման) կամ մանրացման միջոցով՝ համոզվելով, որ կրիչի կամ տեղեկատվության ամբողջականությունը վերականգնել ոչ մի կերպ չի հաջողվի: Կրիչի ամբողջականության ոչնչացման եղանակն Ընկերությունն իրավունք ունի ընտրելու ինքնուրույն՝ ապահովելով, որ ոչնչացված կրիչներից անձնական տվյալներ ստանալու հավանականությունը հասնի զրոյի:

## ԳԼՈՒԽ 7. ԿԵՆՍԱՀԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Կենսաչափական անձնական տվյալները Ընկերությունում մշակվում են միայն Տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի,

|                                                                                                                                                   |                                                    |              |            |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|--------------|------------|
|  <b>ԱՐՄԵՆԻԱ</b><br>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ<br>«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»<br>ԱՍԴԸ | Անձնական տվյալների մշակման և<br>պաշտպանության կարգ | Կոդ SU/Կ-13/ |            |
|                                                                                                                                                   |                                                    | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                                                                   |                                                    | Էջ 10/21     |            |

և եթե օրենքով հետապնդվող նպատակի իրականացումը հնարավոր է միայն այդ կենսաչափական տվյալների մշակման միջոցով:

7.2. Կենսաչափական անձնական տվյալների օգտագործումը և պահպանումը կարող են իրականացվել միայն այնպիսի նյութական կրիչների վրա, այնպիսի տեխնոլոգիաների կիրառմամբ կամ այնպիսի եղանակներով, որոնք ապահովում են այդ տվյալների պաշտպանությունը դրանցում ապօրինի ներթափանցումից, օգտագործումից, ոչնչացումից, վերափոխումից, արգելափակումից, պատճենումից, անձնական տվյալների տարածումից և այլն:

7.3. Ընկերությունը կենսաչափական տվյալները մշակում է երկու նպատակով.

7.3.1. որոշակի տարածքների նկատմամբ հասանելիություն տրամադրելու համար,

7.3.2. Ընկերության տարածք այցելությունների հաշվառման համար,

7.3.3. Հաճախորդներին առողջության և դժբախտ պատահարներից ապահովագրության ծառայությունների մատուցման համար:

7.4. Կենսաչափական տվյալների մշակման կարգն ու պայմանները նույնն են, ինչ անձնական տվյալների համար:

## ԳԼՈՒԽ 8. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

8.1. Տվյալների սուբյեկտն իր անձնական տվյալների նկատմամբ ունի հետևյալ իրավունքները.

| Տվյալների սուբյեկտի իրավունքը                                       | Իրավունքի բովանդակությունը                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | Ընկերության գործողությունները                                                                                                                                                           |
|---------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Անձնական տվյալները մշակելու մասին տեղեկատվություն ստանալու իրավունք | Տվյալների սուբյեկտն իրավունք ունի ստանալ տեղեկատվություն իր անձնական տվյալների մշակման մասին, որը պարունակում է՝<br>- Տվյալների օպերատորի անունը և գտնվելու վայրը,<br>- Տվյալների օպերատորի կողմից անձնական տվյալների մշակման փաստի հաստատումը,<br>- անձնական տվյալները և դրանց ստացման աղբյուրը,<br>- անձնական տվյալների մշակման իրավական հիմք(եր)ը ու նպատակ(ներ)ը,<br>- Ժամկետը, որի համար տրված է սուբյեկտի համաձայնությունը,<br>- լիազորված անձի անունը և գտնվելու վայրը | Ընկերությունը Տվյալների սուբյեկտից դիմում ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պահանջվող տեղեկատվությունը կամ ծանուցում դրա տրամադրումը մերժելու պատճառների մասին |
| Անձնական տվյալները երրորդ                                           | Տվյալների սուբյեկտն իրավունք ունի Տվյալների օպերատորից անվճար                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | Ընկերությունը Տվյալների սուբյեկտից համապատասխան                                                                                                                                         |

|                                                                                                                                                     |                                                            |                     |                   |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------|---------------------|-------------------|
|  <p>ԱՐՄԵՆԻԱ<br/>ԻՆՇՈՒՐՄԵՆՏ</p> <p>«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐՄԵՆՏ»<br/>ԱՍՊԸ</p> | <p>Անձնական տվյալների մշակման և<br/>պաշտպանության կարգ</p> | <p>Կոդ SU/Կ-13/</p> |                   |
|                                                                                                                                                     |                                                            | <p>S – 1.0</p>      | <p>31.01.2025</p> |
|                                                                                                                                                     |                                                            | <p>Էջ 11/21</p>     |                   |

|                                                                                                     |                                                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |
|-----------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>անձանց տրամադրելու մասին տեղեկատվություն ստանալու իրավունք</p>                                   | <p>ստանալ տեղեկատվություն իր անձնական տվյալները երրորդ անձանց տրամադրելու մասին</p>                                                                                                                | <p>դիմում ստանալուց 15 օրացուցային օրվա ընթացքում նրան տրամադրում է տեղեկատվություն առ այն, թե դիմումը ներկայացնելու օրվան նախորդող տարվա ընթացքում ինչպիսի անձնական տվյալներ և ում են տրամադրվել, կամ տեղեկացնում է դիմողին տեղեկատվության տրամադրումը մերժելու պատճառների մասին</p>                                                                                                                                                  |
| <p>Անձնական տվյալներում փոփոխություններ կատարելու իրավունք</p>                                      | <p>Տվյալների սուբյեկտն իրավունք ունի Տվյալների օպերատորից պահանջել փոփոխություններ կատարել իր անձնական տվյալներում, եթե վերջիններս թերի, հնացած կամ ոչ ճշգրիտ են</p>                               | <p>Ընկերությունը Տվյալների սուբյեկտից համապատասխան դիմում ստանալուց 15 օրացուցային օրվա ընթացքում փոփոխություններ է կատարում անձնական տվյալներում, եթե դրանք թերի, հնացած, կամ ոչ ճշգրիտ են: Եթե սուբյեկտը բաժանորդ է, ապա հարցումը կատարվում է Ընկերության վաճառքի կետերում</p>                                                                                                                                                       |
| <p>Անձնական տվյալների մշակման դադարեցում և/կամ անձնական տվյալների ջնջում պահանջելու իրավունք</p>    | <p>Տվյալների սուբյեկտն իրավունք ունի Տվյալների օպերատորից պահանջել իր անձնական տվյալների մշակման անվճար դադարեցում, ներառյալ դրանց ջնջումը. անձնական տվյալների մշակման հիմքերի բացակայությունը</p> | <p>Ընկերությունը Տվյալների սուբյեկտից համապատասխան դիմում ստանալուց 15 օրացուցային օրվա ընթացքում, դադարեցնում է անձնական տվյալների մշակումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը՝ որպես Տվյալների օպերատոր, իրավունք ունի շարունակել անձնական տվյալների մշակումը, եթե առկա են ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքեր: Վերջին դեպքում Ընկերությունը տեղեկացնում է դիմողին տեղեկատվության տրամադրումը մերժելու պատճառների մասին</p> |
| <p>Անձնական տվյալների մշակման վերաբերյալ նախկինում տրված համաձայնությունը հետ կանչելու իրավունք</p> | <p>Տվյալների սուբյեկտն իրավունք ունի ցանկացած պահին հրաժարվել անձնական տվյալների մշակման վերաբերյալ իր համաձայնությունից՝ առանց պատճառաբանության</p>                                               | <p>Ընկերությունը Տվյալների սուբյեկտից համապատասխան դիմում ստանալուց 15 օրացուցային օրվա ընթացքում, դադարեցնում է անձնական տվյալների մշակումը, ջնջում դրանք և այդ մասին ծանուցում է Տվյալների սուբյեկտին, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը՝ որպես Տվյալների օպերատոր, իրավունք ունի շարունակելու անձնական տվյալների մշակումը, եթե առկա են ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքեր:</p>                                            |

|                                                                                                                      |                                                            |              |            |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------|--------------|------------|
|  <p>«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»<br/>ԱՍԴԸ</p> | <p>Անձնական տվյալների մշակման և<br/>պաշտպանության կարգ</p> | Կող SU/Կ-13/ |            |
|                                                                                                                      |                                                            | S – 1.0      | 31.01.2025 |
|                                                                                                                      |                                                            | Էջ 12/21     |            |

|                                                                                                                                         |                                                                                                                                                                                                                                                |   |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|
| <p>Անձնական տվյալների մշակման հետ կապված գործողությունները (անգործությունը) և Տվյալների օպերատորի որոշումները բողոքարկելու իրավունք</p> | <p>Տվյալների սուբյեկտն իրավունք ունի բողոքարկել լիազոր մարմնում կամ դատական կարգով Տվյալների օպերատորի այն գործողությունները (անգործությունը) և որոշումները, որոնք խախտում են Տվյալների սուբյեկտի իրավունքները անձնական տվյալները մշակելիս</p> | - |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|

8.2. Կետ 8.1-ում նշված որոշ իրավազորությունների իրագործումն իրականացվում է Տվյալների սուբյեկտի կողմից գրավոր դիմում ներկայացնելու միջոցով՝ պատվիրված նամակի կամ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով: Ընդ որում անձնական տվյալների մշակման համար նախկինում տրամադրված համաձայնությունը հետ կանչելու իրավունքը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով:

8.3. Դիմումը պետք է պարունակի՝

8.3.1. դիմողի ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրի (կեցության վայրի) հասցեն,

8.3.2. դիմողի ծննդյան ամսաթիվը,

